Կազմված է «18» նոյեմբերի 2019թ.
Բաղկացած է ընդամենը 11 էջից

Տպագրված է ընդամենը 2 օրինակ
ՕՐԻՆԱԿ 2

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է:

«ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆ»
ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
հիմնադրելու մասին հիմնադիրների
30.10.2019թ. № 001 որոշմամբ

Հիմնադրամի տնօրենի ժ/պ՝
Արմեն Մանվելյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ
«_____»_____ 2019թ.
գրանցման համար՝ _____
ՀՎՀՀ՝ _____

Աշխատակից՝

«ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆ»
ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Երևան 2019թ.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆ» սոցիալ-մշակութային հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ) կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված, շահույթ ստանալու նպատակ չհետապնդող (ոչ առևտրային) կազմակերպություն է, որը հետապնդում է սույն Կանոնադրությամբ սահմանված նպատակները:

1.2. Հիմնադրամը ստեղծվել է Սուրեն Թարխանի Սարգսյանի, Հարութ Վարուժանի Տանիելյանի, Գայանե Սարգսի Մուրադյանի, Հակոբ Դանիելի Ավետիքյանի, Վահե Մարգարի Դարբինյանի, Արտակ Արամի Անդրեասյանի, Միհրան Մինասյանի, Էդմոնդ Ազատյանի, Հրաչ Գուլումջյանի, Արշավիր Գյոնջյանի, Գևորգ Մարաշլյանի և Արմեն Ռուբենի Սաքապետոյանի կողմից «30» հոկտեմբերի 2019 թվականին:

1.3. Հիմնադրամը գործում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի, «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ «օրենք»), այլ օրենքների և իրավական ակտերի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի և սույն կանոնադրության հիման վրա:

1.4. Հիմնադրամը գործում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում: Հիմնադրամը կարող է գործել օտարերկրյա պետություններում՝ այդ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

1.5. Հիմնադրամն ունի իր անվամբ կլոր կնիք՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն գրառումներով:

1.6. Հիմնադրամը գործում է օրինականության, կամավորության, ինքնակառավարման և հրապարակայնության սկզբունքներով:

1.7. Հիմնադրամը իր կանոնադրական նպատակները իրականացնելու նպատակով կազմակերպում է սեմինարներ, խորհրդաժողովներ, սիմպոզիումներ, փառատոներ, ցուցահանդեսներ, մրցույթներ, քննարկումներ և այլ միջոցառումներ, իրականացնում է ծրագրեր և նախագծեր:

1.8. Հիմնադրամը համագործակցում է ինչպես ՀՀ պետական և ոչ պետական մարմինների, կազմակերպությունների և հաստատությունների, այնպես էլ արտասահմանյան և միջազգային կազմակերպությունների, ընկերությունների և ուսումնական հաստատությունների հետ:

1.9. Հիմնադրամի գործունեության ժամկետը չի սահմանափակվում:

1.10. Հիմնադրամի անվանումն է.

Հայերեն լրիվ՝ «ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆ» ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
Հայերեն կրճատ՝ «ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆ» ՍՄՀ

Ռուսերեն լրիվ՝ "ВААН ТЕКЕЯН" СОЦИАЛЬНО-КУЛЬТУРНЫЙ ФОНД
Ռուսերեն կրճատ՝ "ВААН ТЕКЕЯН" СКФ
Անգլերեն լրիվ՝ "VAHAN TEKEYAN" SOCIAL-CULTURAL FOUNDATION
Անգլերեն կրճատ՝ "VAHAN TEKEYAN" SCF

1.11. Հիմնադրամի հիմնադիրների տվյալներն են՝

- Սուրեն Թարխանի Սարգսյան (Հայաստանի Հանրապետության քաղաքացի, անձնագիր՝ [redacted], տրված [redacted], [redacted]ի կողմից, հասցե՝ ք. Երևան, [redacted], ՀՎՀՀ [redacted]),

- Հարութ Վարուժանի Տանիելյան (Հայաստանի Հանրապետության քաղաքացի, անձնագիր՝ [redacted] տրված [redacted], [redacted]ի կողմից, հասցե՝ ք. Երևան, [redacted], ՀԾՀ՝ [redacted]),
- Գայանե Սարգսի Մուրադյան (Հայաստանի Հանրապետության քաղաքացի, անձնագիր՝ [redacted], տրված [redacted], [redacted]ի կողմից, հասցե՝ ք. Երևան, [redacted], ՀԾՀ՝ [redacted]),
- Հակոբ Դանիելի Ավետիքյան (Հայաստանի Հանրապետության քաղաքացի, անձնագիր՝ [redacted], տրված [redacted], [redacted] կողմից, հասցե՝ ք. Երևան, [redacted], ՀԾՀ՝ [redacted]),
- Վահե Մարգարի Դարբինյան (Հայաստանի Հանրապետության քաղաքացի, անձնագիր՝ [redacted], տրված [redacted], [redacted]ի կողմից, հասցե՝ ք. Երևան, [redacted], ՀԾՀ՝ [redacted]),
- Արտակ Արամի Անդրեասյան (Հայաստանի Հանրապետության քաղաքացի, նույնականացման քարտ՝ [redacted], տրված՝ [redacted], [redacted]ի կողմից, հասցե՝ ք. Երևան, [redacted], ՀԾՀ՝ [redacted]),
- Միհրան Մինասյան (Ամերիկայի Միացյալ Նահանգների քաղաքացի, անձնագիր՝ [redacted], տրված [redacted], [redacted] կողմից, հասցե՝ [redacted], ԱՄՆ),
- Էդմոնդ Ազատյան (Ամերիկայի Միացյալ Նահանգների քաղաքացի, անձնագիր՝ [redacted], տրված [redacted]ին, [redacted] կողմից, հասցե՝ [redacted]),
- Հրաչ Գույումջյան (Մեծ Բրիտանիայի քաղաքացի, անձնագիր՝ [redacted], տրված [redacted]ին, [redacted] կողմից, հասցե՝ Անգլիա, [redacted]),
- Արշավիր Գյոնջյան (Կանադայի քաղաքացի, անձնագիր՝ [redacted], տրված [redacted]-ին, [redacted] կողմից, հասցե՝ [redacted] Կանադա),
- Գևորգ Մարաշլյան (Ամերիկայի Միացյալ Նահանգների քաղաքացի, անձնագիր՝ [redacted], տրված [redacted]ին, [redacted] կողմից, հասցե՝ [redacted], ԱՄՆ),
- Արմեն Ռուբենի Սաքապետոյան (Հայաստանի Հանրապետության քաղաքացի, անձնագիր՝ [redacted] տրված [redacted]-ին, [redacted]ի կողմից, հասցե՝ ք. Երևան, [redacted], ՀԾՀ՝ [redacted]):

1.12. Հիմնադրամի գտնվելու վայրն է՝ ք. Երևան, Սայաթ-Նովա 21ա, 48 տարածք:

2. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԸ

2.1. Հիմնադրամի նպատակներն են՝

- կրթության, գիտության, մշակույթի, արվեստի ոլորտներում անհատի հոգևոր զարգացման աջակցության ցուցաբերում, այդ թվում ուսուցման համար դրամաշնորհների տրամադրումը,
- առողջ ապրելակերպի խթանմանն ուղղված միջոցառումների կազմակերպմանը, մանկական առողջարանների կառուցմանը աջակցության ցուցաբերումը,

- ֆիզիկական դաստիարակության և սպորտի (բացառությամբ պրոֆեսիոնալ սպորտի) ոլորտում աջակցության ցուցաբերումը, այդ թվում, սպորտային ժամանցային միջոցառումների կազմակերպումը,
- որբ երեխաներին, առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին, հսկողության տակ չգտնվող երեխաներին, կյանքի ծանր պայմաններում գտնվող երեխաներին և նրանց սոցիալական վերականգնմանն ուղղված միջոցառումների կազմակերպանր աջակցության ցուցաբերումը,
- երեխաների և երիտասարդների հայրենասիրական, հոգևոր և բարոյական դաստիարակությանը աջակցության ցուցաբերումը,
- երիտասարդական նախաձեռնություններին, ծրագրերին, մանկական և երիտասարդական շարժմանը և նրանց կազմակերպություններին աջակցության ցուցաբերումը;
- սոցիալական գովազդի արտադրությանը և (կամ) տարածմանը աջակցության ցուցաբերումը.
- շրջակա միջավայրի պահպանության խնդիրները:

2.2. Հիմնադրամի շահառուներ են համարվում ֆիզիկական և իրավաբանական այն անձինք, որոնց օգտին, հիմնադրամի կանոնադրությանը համապատասխան, կարող են կատարվել կամ կատարվել են որոշակի վճարումներ, մատուցվել ծառայություններ կամ նրանց փոխանցվել հիմնադրամի գույքի որոշ մասը:

2.3. Հիմնադրամի շահառուներն են.

- կրթության, գիտության, մշակույթի, արվեստի, սպորտի, սոցիալական գովազդի արտադրության և (կամ) տարածման ոլորտներում գործունեություն իրականացնող իրավաբանական անձինք.
- կրթության, գիտության, մշակույթի, արվեստի, սպորտի, սոցիալական գովազդի արտադրության և (կամ) տարածման ոլորտներում գործունեություն իրականացնող ֆիզիկական անձինք, ուսանողները:
- որբ երեխաները, առանց ծնողական խնամքի մնացած երեխաները, հսկողության տակ չգտնվող երեխաները, կյանքի ծանր պայմաններում գտնվող երեխաները:

3. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԱՆՁԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

3.1. Հիմնադրամը ձեռնարկատիրական գործունեություն կարող է իրականացնել անձամբ կամ այդ նպատակով ստեղծել տնտեսական ընկերություններ կամ լինել դրանց մասնակից:

3.2. Հիմնադրամը չի զբաղվում ձեռնարկատիրական գործունեությամբ:

4. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ, ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1. Հիմնադրամը ստեղծված է համարվում օրենքով սահմանված կարգով պետական գրանցման պահից:

4.2. Հիմնադրամն իրավաբանական անձ է և ունի հիմնադրի գույքից առանձնացված գույք, որը հաշվառվում է ինքնուրույն հաշվեկշռում:

4.3. Հիմնադրամն իրավունք ունի իր անունից ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

4.4. Հիմնադրամն իրավունք ունի օրենքով սահմանված կարգով բացելու բանկային հաշիվներ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների բանկերում Հայաստանի Հանրապետության դրամով և (կամ) արտարժույթով:

4.5. Հիմնադրամն իր կանոնադրության նպատակներին համապատասխան իրավունք ունի՝

- անարգել տարածել տեղեկություններ իր գործունեության մասին.
- հիմնադրել մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցներ.
- պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից օրենքով սահմանված կարգով ստանալ տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են իր կանոնադրական նպատակներն իրականացնելու համար.
- ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ (մասնաճյուղեր, ներկայացուցչություններ) և հիմնարկներ.
- ստեղծել տնտեսական ընկերություններ կամ լինել նրանց մասնակից.
- իրականացնել օրենքով չարգելված այլ գործունեություն:

4.6. Հիմնադրամը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և իր կանոնադրությանը համապատասխան, կարող է՝ անդամակցել միջազգային և օտարերկրյա ոչ պետական կազմակերպություններին:

4.7. Հիմնադրամը պարտավոր է՝

- գործել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, օրենքին և այլ օրենքներին ու իրավական ակտերին, ինչպես նաև հիմնադրամի կանոնադրությանը համապատասխան.
- օրենքով սահմանված կարգով վարել գործավարություն և հաշվապահական հաշվառում.
- օրենքով նախատեսված դեպքերում և կարգով տեղեկատվություն ու հաշվետվություններ ներկայացնել պետական մարմիններ.
- իրականացնել օրենքով և այլ օրենքներով սահմանված այլ պարտականություններ:

4.8. Հիմնադիրները պատասխանատու չեն իրենց կողմից ստեղծված Հիմնադրամի պարտավորությունների, իսկ Հիմնադրամը՝ իր հիմնադիրների պարտավորությունների համար:

4.9. Կանոնադրության փոփոխություններ մտցնել կարող են ինչպես հիմնադրամի հիմնադիրները, այնպես էլ Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը՝ ձայների ընդհանուր թվի 2/3-ով:

5. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

5.1. Հիմնադրամի կառավարման մարմիններն են Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը և տնօրենը: Հիմնադրամի կառավարման բարձրագույն և իր գործունեության նկատմամբ հսկողություն իրականացնող մարմինը Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդն է: Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամներն առաջին անգամ նշանակվում են հիմնադիրների միաձայն որոշմամբ: Հիմնադրամի պետական գրանցումից հետո եռամսյա ժամկետում, իսկ հետագայում՝ հոգաբարձուների խորհուրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Հոգաբարձուների խորհրդի կազմը սահմանվում է 9 հոգի: Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամները չեն կարող լինել հիմնադրամի այլ մարմնի անդամ:

5.2. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահին ընտրում և ազատում են հոգաբարձուների խորհրդի անդամները՝ խորհրդի անդամների կազմից՝ իրենց ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

5.3. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահը, համանախագահները և մյուս անդամները չեն համարվում հիմնադրամում պաշտոն զբաղեցնող անձ և իրենց պարտականությունները կատարում են առանց վարձատրության՝ հասարակական հիմունքներով: Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամների համար կարող է սահմանվել փոխհատուցում նրանց այն ծախսերի համար, որոնք կապված են հոգաբարձուների խորհրդի անդամի պարտականությունների կատարման հետ: Փոխհատուցման վճարման կարգը սահմանում է հոգաբարձուների խորհուրդը:

5.4. Հոգաբարձուների խորհրդի անդամների լիազորությունների ժամկետ է սահմանվում 3 տարի:

5.5. Հոգաբարձուների խորհրդի անդամի լիազորությունը դադարում է՝

- Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահին տրված գրավոր դիմումի հիման վրա.
- նրա կողմից իր պարտականությունները պատշաճ չկատարելու դեպքում՝ հոգաբարձուների խորհրդի մնացած անդամների ձայների առնվազն 3/4-ով.
- լիազորությունների ժամկետի ավարտման դեպքում, եթե կանոնադրությամբ նման ժամկետ սահմանված է.
- դադարել են հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամների ընդհանուր թվի կեսի կամ կեսից ավելիի լիազորությունները.
- դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու դեպքում.
- նրա մահվան դեպքում:

5.6. Հոգաբարձուների խորհրդի նոր անդամի ընտրության համար թեկնածու է առաջադրում խորհրդի անդամներից որևէ մեկը: Հոգաբարձուների խորհրդի անդամի թափուր տեղ առաջանալու օրվանից ոչ ուշ, քան 10 օրվա ընթացքում հոգաբարձուների խորհրդի անդամներին նշանակած անձինք պետք է պատշաճ ձևով տեղեկացված լինեն: Հոգաբարձուների խորհրդի անդամի լիազորությունների դադարելու դեպքում նրա փոխարեն նոր անդման նշանակվում է հոգաբարձուների խորհրդի կողմից ոչ ուշ, քան թափուր տեղ առաջանալու մասին տնօրենի ծանուցումն ստանալու օրվանից հետո՝ 30 օրվա ընթացքում:

5.7. Եթե հոգաբարձուների խորհրդի բոլոր անդամների լիազորությունների դադարման դեպքում երկամսյա ժամկետում հոգաբարձուների խորհրդի անդամների կեսից ավելին չի նշանակվում, ապա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը երկամսյա ժամկետում նշանակում է 3 անդամից կազմված ժամանակավոր խորհուրդ: Եթե ժամանակավոր խորհուրդ նշանակելուց հետո՝ վեցամսյա ժամկետում, հոգաբարձուների խորհրդի անդամների կեսից ավելին չի նշանակվում, ապա ժամանակավոր խորհուրդը պարտավոր է դիմել դատարան՝ հիմնադրամը լուծարելու համար:

5.8. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի իրավասության հարցերն են՝

- հիմնադրամի ռազմավարական ծրագրի (ծրագրերի) հաստատումը.
- հիմնադրամի կողմից իրականացվող (այդ թվում՝ անձամբ) ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը.
- հիմնադրամի բյուջեի և նրա փոփոխությունների, տարեկան ֆինանսական հաշվետվությունների և հիմնադրամի գործունեության տարեկան հաշվետվությունների հաստատումը.
- հիմնադրամի գույքի տնօրինման կարգի հաստատումը.
- հիմնադրամի վերակազմակերպման մասին որոշման ընդունումը.
- հիմնադրամի լուծարման հարցով դատարան դիմելու մասին որոշման ընդունումը.

- հիմնադրամի լուծարման հանձնաժողովի (լուծարողի) նշանակումը, լուծարման կարգի ու ժամկետների սահմանումը, լուծարման միջանկյալ հաշվեկշռի հաստատումը, լուծարման հաշվեկշռի հաստատումը.
- հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին որոշումների ընդունումը.
- հոգաբարձուների խորհրդի նախագահի, տնօրենի և կանոնադրությամբ սահմանված այլ մարմինների ընտրության և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարման մասին որոշումների ընդունումը.
- հիմնադրամի կանոնադրությամբ նախատեսված այլ մարմինների ձևավորումը.
- հիմնադրամի կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու, կանոնադրության փոփոխություն, նոր խմբագրությամբ կանոնադրություն հաստատելու մասին որոշումների ընդունումը.
- տնտեսական ընկերությունների ստեղծման կամ դրանցում մասնակցության, ինչպես նաև առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների ստեղծման ու դրանց կանոնադրությունների հաստատման մասին որոշումների ընդունումը.
- հիմնադրամի ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումը.
- տնօրենի հաշվետվությունների լսումը տարեկան մեկ անգամ.
- իր որոշումների կատարման ընթացքի վերահսկումը.
- հիմնադրամի աուդիտ իրականացնող անձի (աուդիտորի) ընտրությունը.
- հիմնադրամի կառուցվածքի հաստատումը.
- հիմնադրամի հաստիքացուցակի հաստատումը.
- օրենքով, կանոնադրությամբ նախատեսված, ինչպես նաև հիմնադրամի այլ մարմիններին չվերապահված այլ լիազորությունների իրականացումը:

5.9. Հոգաբարձուների խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով: Հոգաբարձուների խորհրդի նիստերը կարող են անցակցվել հեռակա կարգով՝ էլեկտրոնային հաղորդակցման եղանակով կամ տեսակապի միջոցով: Հոգաբարձուների խորհրդի նիստերը պարտադիր արձանագրվում և ստորագրվում են մասնակից բոլոր անդամների կողմից: Նիստերը կարող են ձայնագրվել և/կամ տեսաձայնագրվել:

5.10. Հոգաբարձուների խորհրդի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում են հոգաբարձուների խորհրդի անդամների կեսից ավելի: Հոգաբարձուների խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող անդամների ձայների մեծամասնությամբ:

5.11. Հիմնադրամի տնօրենի ընտրության և պաշտոնից ազատման, ինչպես նաև հիմնադրամի վերակազմակերպման, լուծարման և կանոնադրության փոփոխության կամ նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատման մասին որոշումներն ընդունվում են հոգաբարձուների խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների 2/3-ով:

5.12. Եթե հոգաբարձուների խորհրդի նիստում քննարկվում է հիմնադրամի խորհրդի որևէ անդամի կամ նրա հետ փոխկապակցված անձի (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող, զավակ, եղբայր և քույր) գույքային կամ այլ շահերի վերաբերյալ հարց, ապա հոգաբարձուների խորհրդի տվյալ անդամը քվեարկությանը չի մասնակցում:

5.13. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահն ընտրվում է հոգաբարձուների խորհրդի նիստի կողմից:

5.14. Խորհրդի նախագահը՝

- կազմակերպում է հոգաբարձուների խորհրդի աշխատանքները,
- գումարում է հոգաբարձուների խորհրդի նիստերը և նախագահում է դրանք.
- կազմակերպում է նիստերի արձանագրության վարումը.

- հոգաբարձուների խորհրդի քննարկմանն է ներկայացնում հոգաբարձուների խորհրդի անդամների լիազորությունների դադարեցման մասին որոշման նախագիծ, սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում:

5.15. Հոգաբարձուների խորհրդի նախագահի բացակայության դեպքում նրա պարտականությունները, հոգաբարձուների խորհրդի որոշմամբ, կատարում է անդամներից մեկը:

5.16. Հոգաբարձուների խորհրդի նիստերը գումարվում են առնվազն տարին մեկ անգամ՝ հոգաբարձուների խորհրդի նախագահի կողմից: Հոգաբարձուների խորհրդի նիստերը կարող են հրավիրվել նաև հոգաբարձուների խորհրդի անդամների 1/3-ի պահանջով՝ հոգաբարձուների խորհրդի նախագահի կողմից՝ համապատասխան պահանջը ներկայացնելուց 30 օրվա ընթացքում: Եթե նշված ժամկետում հոգաբարձուների խորհրդի նախագահը նիստ չի հրավիրում, ապա նիստը կարող են հրավիրել նման պահանջ ներկայացրած անձինք: Հոգաբարձուների խորհրդի նիստերը կարող են անցկացվել էլեկտրոնային փոստի կամ կապի այլ միջոցների կիրառմամբ:

6. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ

6.1. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ կարող են լինել 18 տարին լրացած գործունակ ֆիզիկական անձինք, այդ թվում՝ հիմնադիրները, սփյուռքահայերը, որոնք չունեն ՀՀ քաղաքացիություն:

6.2. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք:

6.3. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամներն իրավունք ունեն՝

- առաջարկություններ ներկայացնելու հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նիստերի օրակարգի և քննարկվող հարցերի վերաբերյալ,
- նախապատրաստելու և հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի քննարկմանը ներկայացնելու հարցեր, առաջարկություններ և որոշումների նախագծեր,
- ստանալու տեղեկություններ հիմնադրամի գործունեությանը վերաբերող ցանկացած հարցի վերաբերյալ,
- ստանալու իր պարտականությունների կատարմամբ պայմանավորված ծախսերի փոխհատուցում:

6.4. Հոգաբարձուների խորհրդի անդամները պարտավոր են՝

- մասնակցել հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նիստերին, այդ թվում նաև հեռակա կարգով,
- իրենց պարտականությունների կատարման ընթացքում գործել՝ ելնելով հիմնադրամի շահերից:

7. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՏՆՕՐԵՆԸ

7.1. Հիմնադրամի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Հիմնադրամի տնօրենը (այսուհետև տեքստում՝ տնօրեն):

7.2. Տնօրենի իրավասությանն են պատկանում հիմնադրամի ընթացիկ գործունեության կառավարման բոլոր հարցերը՝ բացառությամբ օրենքով և կանոնադրությամբ հոգաբարձուների խորհրդի իրավասություն հանդիսացող հարցերի: Հիմնադրամի տնօրենը կազմակերպում է հոգաբարձուների խորհրդի որոշումների կատարումը:

7.3. Տնօրենը ընտրվում և պաշտոնից ազատվում է հոգաբարձուների խորհրդի կողմից: Տնօրենի պաշտոնում առաջին անգամ նշանակում կարող են կատարել նաև հիմնադիրները: Հիմնադրամի անունից պայմանագիրը ստորագրում է հոգաբարձուների

խորհրդի նախագահը կամ հոգաբարձուների խորհրդի կողմից լիազորված այլ անձ: Տնօրենի իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են օրենքով, Հիմնադրամի կանոնադրությամբ և նրա հետ կնքված պայմանագրով:

7.4. Տնօրենը՝

- կառավարում է հիմնադրամի ցանկացած տեսակի և քանակի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում հիմնադրամի անունից.
- ներկայացնում է հիմնադրամը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում.
- գործում է առանց լիազորագրի.
- տալիս է լիազորագրեր.
- սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային,
- բանկերում բացում է հիմնադրամի հաշվարկային (այդ թվում՝ արտարժութային) և այլ հաշիվներ.
- հոգաբարձուների խորհրդի հաստատմանն է ներկայացնում հիմնադրամի աշխատանքային ներքին կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ու հիմնադրամի կողմից հիմնադրվող տնտեսական ընկերությունների կանոնադրությունները, հիմնադրամի վարչակազմակերպական կառուցվածքը, հաստիքացուցակը.
- իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, կատարման համար տալիս է պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.
- սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում է հիմնադրամի աշխատողներին, այդ թվում՝ Հիմնադրամի առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ղեկավարներին և աշխատողներին.
- աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ:

7.5. Հիմնադրամի տնօրենը այլ կազմակերպություններում կարող է վճարովի պաշտոններ զբաղեցնել միայն հոգաբարձուների խորհրդի համաձայնությամբ:

7.6. Հոգաբարձուների խորհուրդն իրավունք ունի ցանկացած ժամանակ լուծել տնօրենի հետ կնքված պայմանագիրը՝ օրենքով, հիմնադրամի կանոնադրությամբ և աշխատանքային պայմանագրով սահմանված կարգով:

8. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՒՅՔԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

8.1. Հիմնադրամը՝ որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով:

8.2. Հիմնադրամի սկզբնական միջոցներն են հիմնադրի կողմից ստեղծման պահին փոխանցված նյութական և (կամ) ֆինանսական միջոցները:

8.3. Հիմնադրի կողմից հիմնադրամին հանձնված գույքը հիմնադրամի սեփականությունն է: Հիմնադրամն այդ գույքն օգտագործում է իր կանոնադրությամբ սահմանված նպատակով:

8.4. Հիմնադրամի գույքի ձևավորման աղբյուր կարող են լինել՝

- հիմնադրի ներդրումը.
- ֆիզիկական և իրավաբանական անձանց նվիրատվությունները և նվիրաբերությունները, այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիների, իրավաբանական անձանց, միջազգային կազմակերպությունների նվիրատվությունները և նվիրաբերությունները.

- դրամական մուտքերը պետական բյուջեից.
- դրամաշնորհները.
- հիմնադրամի և իր ստեղծած կամ իր մասնակցությամբ տնտեսական ընկերությունների ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցները.
- հանգանակությունները՝ միջոցներ, որոնք ստացվում են դրանց կոչտակմանն ուղղված գործունեությունից (մշակութային, սպորտային, զվարճալի և այլ միջոցառումների միջոցով գումարների հայթայթում).
- օրենքով չարգելված այլ միջոցներ:

8.5. Հիմնադրամի սեփականությունը չի կարող օգտագործվել ի շահ իր հիմնադիրների, հիմնադրամի մարմինների անդամների, ինչպես նաև հիմնադրամի աշխատողների, բացառությամբ աշխատողների աշխատավարձի և հիմնադրամի մարմինների անդամների պարտականությունների կատարմամբ պայմանավորված՝ փոխհատուցման ենթակա ծախսերի, ինչպես նաև այն դեպքերի, երբ հիմնադրամի հիմնադիրները, հիմնադրամի մարմինների անդամները, ինչպես նաև հիմնադրամի աշխատողները հանդիսանում են կանոնադրությամբ նախատեսված շահառուներ:

8.6. Հիմնադրամն օրենքով և իր կանոնադրությամբ սահմանված կարգով Հոգաբարձուների խորհրդի որոշմամբ իր հայեցողությամբ տիրապետում, տնօրինում և օգտագործում է սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը, այդ թվում իրավունք ունի իր գույքը, որպես սեփականություն, օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները, գույքը գրավ դնել կամ տնօրինել այլ եղանակով:

9. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

9.1. Հիմնադրամը կարող է վերակազմակերպվել միայն հիմնադրամի՝ այլ հիմնադրամին միացման կամ այլ հիմնադրամի հետ միաձուլման ձևով:

9.2. Հիմնադրամի վերակազմակերպումը կատարվում է հիմնադիրների միաձայն որոշմամբ: Հիմնադրամի վերակազմակերպումը կարող է կատրվել նաև հոգաբարձուների խորհրդի որոշմամբ:

9.3. Հիմնադրամի լուծարումը հանգեցնում է դրա գործունեության դադարմանը՝ առանց իրավունքները և պարտականությունները իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

9.4. Հիմնադրամը լուծարելու մասին որոշում կարող է ընդունել միայն դատարանը՝ շահագրգիռ անձանց դիմումով:

9.5. Հիմնադրամը կարող է լուծարվել եթե.

- հիմնադրամի գույքը բավարար չէ նրա գործունեության իրականացման համար, և անհրաժեշտ գույք ստանալու հնարավորությունն իրական չէ.
- իր գործունեությամբ հիմնադրամը շեղվել է կանոնադրությամբ նախատեսված նպատակներից.
- հնարավոր չէ հասնել հիմնադրամի նպատակներին և կատարել այդ նպատակների փոփոխություններ.
- հիմնադրամի գործունեությունը վտանգում է պետական և հասարակական անվտանգությունը, հասարակական կարգը, հանրության առողջությունն ու բարքերը, այլոց իրավունքներն ու ազատությունները.

- հիմնադրամը թույլ է տվել օրենքի բազմակի կամ կոպիտ խախտումներ կամ պարբերաբար իրականացրել է իր կանոնադրական նպատակներին հակասող գործունեություն.
- հիմնադրամը ստեղծելիս հիմնադիրը թույլ է տվել օրենքի էական խախտումներ կամ կեղծիքներ:

9.6. Հիմնադրամի լուծարման դեպքում պարտատերերի պահանջները բավարարելուց հետո, ինչպես նաև այն դեպքում, երբ լուծարման միջանկյալ հաշվեկշիռը հաստատելու պահին հիմնադրամը չունի պարտավորություններ պարտատերերի նկատմամբ, գույքն ուղղվում է հիմնադրամի կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, իսկ դրա անհնարինության դեպքում փոխանցվում է պետական բյուջե:

9.7. Հիմնադրամը լուծարվում է օրենքով սահմանված կարգով: